

զացման աստիճանով նուրբ վերակացու-
 թիւններ ըմբռնելու շատ ընդունակ չ'է:
 Պէտք չ'է մոռանալ որ, կրօնի դասա-
 տուութեան ժամանակը (որովհետեւ այս
 տեղ ներգործում են առաւել բանակա-
 նութեան, զգացմունքի և կամքի վերայ
 քան թէ մտքի և յիշողութեան,) հար-
 կաւոր են ուսուցիչներին առանձին ձեռ-
 նարկութիւններ և կշռադատութիւններ:
 Այս տեղ զլնաւոր արդելատիթներից մի-
 նը կարող է լինիլ և այս, եթէ ուսուցչի
 իրա կրօնական համոզմունքը կատարելա-
 պէս համաձայն չ'են դասախօսութեան
 բովանդակութեանը: Արա դասատու-
 թիւնը չ'է կարող հասանել պողարերու-
 թեան, եթէ նորա հետ համեմատ չ'են և
 նոյն իսկ ուսուցչի ներքին համոզմունքը
 որովհետեւ նորա մէջ ամենահզօր կերպով
 ներգործում են զգայակցութիւնը և օրի-
 նակը: Աղեշնչութիւնը վերոյիշեալ միջոց-
 ներով փոխադրական է լինում, եթէ մին-
 չեւ անգամ սուտ ևս եղած լինէր նորա
 սկզբունքը: Ըստ այսմ ոչ մի դասատու
 կրօնի չ'է կարող հասանել այնպիսի հե-
 տեանքների, թէև փիլիսոփայ ևս եղած
 լինէր, ինչպէս նոքա, որոնք ներգործում
 են աշակերտների զգացմունքի վերայ. ար-
 դարև զգացմունքով ներընդունուած կը-
 բօնը այն ժամանակ միայն յուսալի ար-
 մատ է արձակում և զարգանում մինչև
 պողարերութիւն, երբ այդ զգացմունքը
 զուգակից է արտաքին ճիշտ սկզբունքնե-
 րի, և ներգործում են միշտ մարդոյ մէջ
 միևնոյն ուղղութիւնով: Այս տեղեց է
 ահաբողոքում զօրութիւնը բարեկարգ Ա-
 կեղեցւոյ, որ կայանում է Աստուածա-
 յայտնութեան ճշմարտութիւնների մեկ-

նութեան վերայ: Հողոյ վերայ կրօնի
 ներգործելուն՝ և հետևաբար նորա ուս-
 ման՝ կեանքի վերայ ունեցած ազդեցու-
 թեանը ևս մեծապէս կ'օգնէ և այն՝ եթէ
 դասատուութեան մէջ առաջին աւանդե-
 լիքները լինին դիւրըմբռնելի և սրտաշարժ,
 զորօրինակ ուսումը ընդհանուր մեղան-
 չականութեան համար, ահեղ դատաս-
 տանի և յաւիտենական պատժի համար
 մեղաց քաւութիւն ստանալու կարելիու-
 թեան համար կենդանութեան ժամանակ:
 (Երբեք չ'է)

Բարեգոհութեամբ Աստուծոյ Ստեփանոս Ստեփանոս:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՇԻՐԵԿԵՅ

ԱՇԽԱՏԱԲԵԱԼ

Ի ՊՕՂՈՍ ՎԱՐԳԱՊԵՏԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԸՆՈՒԲԵԱՆ ԳԵՏ.

Ի վերջին և բարձու ծայրի Արցախու
 Ապարքոսութեանն, կամ Չլարատու նա-
 հանդին, կացեալ կայ Աթոյ, կամ Աօր-
 թիւլի գաւառ, որ այժմ է սահմանա-
 գլուխ Օսմանեան Տիեզերակալութեանն
 ընդ Ռուսս:

Սա ի հիւսոյ ունի զԱխրքիլիկ, յարե-
 ւելից զՇիրակ Արևելեան, և զլերինս՝ ուս-
 ւոյ: Ի հարաւոյ զԱրաղգաւորս և զՕւրի-
 շատ, և յարևմտից զԱրաահան և զՉլլղր:

Այս գաւառ ընդարձակ, և մեծաւ մա-
 սամբ ամայի և աւերակ 1), ոչ միայն է եր-

(1) Յայս ընդարձակ գաւառի պատմեն լինել
 բազմաց և վաղնջուց աւերակաց, Գեղատեղիք բա-

կիր խոտալից և պարարտարօտ, այլ և լինին ի նմա բազմաբղխենի ակունք հորդահոսան ջուրց 2), որք հաւաքեալ կազմեն անդ զձկնաբեր լճակն Արփա - կեօլի 3), որոյ շրջապատ է միոյ ժամու ճանապարհ:

Ասաի յորդութեամբ իմն սկիզբն առնու Ախուրեան գետ, որ այժմ յանուանէ լճակին զանուն առեալ, կոչի Արփա չայի. և զառաջինն յարեւելս հասեալ ընդ մէջ սահմանաց իւրոյ գաւառին, հասանէ ի Խազանձի գիւղ, ուր Աօրթիւլիւ լեռն մնայ յՕսմանեան սահմանի, և Շիշթեփէ ի Ռուսս:

Անդ առ գիւղիւն ընկալեալ զայլ ջուր, ապա զԽարախաչ, և զԽրղըլ - Խոչու լեռանց ջուրն, շրջէ զընթացսն ի հարաւ, յայսկոյս և յայնկոյս բաժանեալ զՇիւրակ. զմի մասն նորա արեւելեան թողեալ ի ձախմէ, և զերիս մասունսն յաջմէ:

Իջեալ այսպէս ընդ քարուտս, և ընդ քարակտուր խորս, ի սակաւ տեղիս ունելով զաշտափայրս զեղերբքն, ուրեք ուրեք շրջէ զջրաղացս, անցանէ նախ զառա-

ւական հինգ հարիւր տանց ընակչաց. ի մէն մի ի նոսա հինգ ձիթահանք, զետնափոր մեծամեծ ամբարանոցք:

(2) Ասոն ականցս այսպէս ասեն, թէ ի սահմանի Ախրբղխիու են մեծամեծ լիճք երեք, անուանեալ Խաչ - գեօլ, Տուման գեօլ, և Փերվանէ. որք ոչ հոսն արտաքս, նոցա զաղոնի ոտք իցնն: Բայց յիւրոց անտի ծոցոյ լեռանցն՝ յորոց շրջսպատեալն է, հնար է կարծել. նա զի և Փերվանէ զիւր ոտն հանէ արտաքս ի Ծալկայ, և սկզբնաւորէ զԽրամ:

(3) Զայս անուանակոչութիւն առեալ ասն ոմանք, զի մին ի լեռանց նորա Արփա - տաղի անուանի, և այլք թէ առ Արփայ կոչեցեալ աւերակաւ անցանէ:

Ջիւաւ Աղէքսանդրապօլսոյ և ապա Շիւրակաւանու, անդ յինքն ընդունի զՎեան Աարուց 4):

Ընթացեալ ուրեք թափով, ուրեք հանդարտ ըստ զրից զրից տեղեացն, զայ մերձենայ ի թերակղզին Հոռոմոսի վանաց:

Այս թերակղզի բարձրութեան հաւասար ցամաքին, յորմէ պարանոցաւ իմն բաժանի, և խոտորեալ ի նմանէ արտաքս ուղղի ի գետ անդր կողմնակի ի վայր երկանեալ ցքանի մի հազար քայլ երկայնութիւն, որով և ընթացք գետոյն իսկ շեղեալ քերելով զափամբ նորա զայ հասանէ ի բարձրակատար ծայր նորա, և շրջի յարեւմուտս:

Աստանօր յառաջագոյն ընթացք գետոյն զայլ շրջապատոյս ճանապարհ կալեալ

(4) Այս գետ սկզբնաւորի ի Սօղանլու լեռանց, և միացեալ զան իջանեն ի քաղաքն Աարուց, ընդ մէջ բաժանեալ զնա, ընդ երիւք քարաչէն կամրջովք անցանն. միջինն կոչի Խարախան - օղլու - քեօփրիւսի, ստորինն որ ի թաղի Հայոց, յիկեղեցոյ ի գերեզմանատունն երթալոյ՝ քակեալ է. Մէհմետ Փաշա ոմն նորոգեալ է. Եւ յառաջ գնացեալ ուրեք զԶարիշատ ի Աարուց բաժանէ, ուր կայ և փայտակերտ կամուրջ, և ուրեք ի Շիւրակայ առ փոքր Փերկիտ գիւղիւն, ապա զԵրազգաւորս ի Շիւրակայ Անուց:

Սա քան զԱխուրեան նուազ է, և եթէ սաստկանայ՝ ի քանի մի օրս և եթ տեւէ, և վնաս իսկ գործէ, մինչև զսոյլս վարեալ տանի, Իսկ Ախուրեան առատացեալ մանաւանդ ի գարնան, յետ ամսօրեից հազիւ իջանէ:

Գետոյս յատուկ անուն ոչ գտաք. ունիմք առ հնովք յիշատակեալ Ռահ գետ. բայց Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեան ոչ զսա համարէր, և ոչ այլու՛մ գետոյ ընծայէր զանունդ. անյայտ ասէր լինել առ մեօր:

է, զի առ զդէմ՝ ունելոյ երկայնեալ բազկի հանդիպակաց բարձրաւանդակին, հարկեալ է միւս ևս խոտորումն ունել, յարեմաց անախի ի հիւսիս ընթանալ, և քերել զներքին կողամբ թերակղզոյն, ի ծայրէ բազկին առ սպարանոցաւ երթալ շրջեալ ի հարաւ, զմին թերակղզի, և զմիւսն բազուկ ցածագոյն՝ ընդ մէջ իւրոց շրջապտոյտ յածոյից կացուցեալ:

Ե. յս ընթացք՝ երբ և յորում ժամանակի՝ ոչ կարացաք զիտել. բայց յայանի է թէ զայն բազուկ յարմկանէ քանդեալ վարեալ, այլ ևս յարեմուտս ընթացեալ, դարձեալ խոտորի ի հարաւ առ բարձրաւանդակաւն. և զառաջին տեղի յածոյիցն թողեալ ցամաք երկիր խոնաւուտ՝ խոտաբեր և եթ՝ ցայտօր, որք զրկեն զմնացորդն խոտակեալ բազկին:

Իջանէ ապա գեան յԱնի քաղաք, և զառաջեաւ նորա կազմէ զփոքրիկ ինչ կրղզեակ բերդաւոր, զոր այժմ Խրղ-խուլէսի անուանեն, զձայն խոխոջանայն բարձրացուցանէ ի քարավազան, և խոտորմամբ ինչ ընթանայ զառաջեաւ Բագարանի, այգեաց նորա, և ապա չորից զիւզորայից ևս բարերարեալ հասանէ Վեոռ-օղլու լերին 5), և պատահէ Արասխայ. այլ և

զեր անուն կորուսեալ՝ ընթանայ ընդ նմա Արասխ անուամբ:

Ի վերայ Ախուրեան գետոյ չորից կամրջաց փլուզելոց զհիմունս ակաք մնացեալ: Մի ի վեր քան զՕճախ-Խուլի յԱրազ գաւորս՝ հանդէպ Խանլըճայու. որոյ քանդումն երբ իցէ, ոչ կարացաք զիտել:

Արկրորդ՝ ի վեր քան զՎալար՝ առաջի Չրրփրու գեղջն արեւելեան Շիրակայ, որոյ երկուց կողմանցն մնացորդք հիմանց և մասանց ինչ կամարիցն՝ ակն յայանի վերայն զարմանաչէն և սքանչելի իմն լինել: Յերկոսին ծայրս են և քարուկիր սնեակք: Ներունի ոմն պատմեաց, թէ լսեաք ի հարց մերոց՝ որք ասէին թէ, «Խաթուն-օղլուն քանդեալ կործանեաց 6):

Արրորդ ի ցամաքէ՝ որ մօտ թերակղզուցն ընդ բարձրաւանդակ բազկին: Պատմեյին մեզ թէ մին ի Խաթուն (Ղլուից շինեալ իցէ զայն՝ զհիմունան քարուկիր, և զայլս փայտակերտ: Իբրև Ռուսն յԱրեան արշաւէր յառաջնումն՝ այն է առ 1800 ամօք, նոքա դարձեալ այրեցին, զի մի և յայնկոյս արշաւանաց աւնիցեն: Արեքին սոքա ի բարձուէ գետոյն են հաստատեալ:

Չորրորդ՝ զառաջեաւ Անուոյ քաղաքին, զոր ոչ իջի ի խորս ձորոյն նկատել:

(5) Յամենայն տեղիս ձանապարհորդութեան իմոյ ուր ուրիք տեսի բերդ յանառիկ և ի գժուարամտոյց տեղիս, զամենեցուն անուն լուայ Քեռ-օղլու խալէսի, Քեռ օղլու թէփեսի Ե. յս լեանն կայ ընդ մէջ սահմանաց երկուց տիեզերակալութեանց, զՎաղղուան ի միում թողեալ, ի թիկանց ունի և զԲարունս, և զՂոզբ ի միւսումն: Ինքն երկու գիմօք կէս մի յայնկոյս, կէս մի յայնկոյս: Գուցէ սա իցէ Վապուտ բերդ, որ և Արտազերս ասի:

(6) Հին տոհմականութիւն է այս սերունդ և տոհմականութիւն ի բազում գերդաստանս բաժանեալ. յորոց ոմանք անուանիք, և Պէ. յ. ք. Շիրակայ կացեալ, և քանի մի ևս ապստամբք ի Փաշայիցն Վարուց, Ի սահմանի Շիրակայ Անուոյ, որպէս և շրջապատ նորա, և Խօջափանք, զիւզբ սոցա էին, զորս տասանորդէին, և ծանրանային ի վերայ բնակչաց:

Արդ և Երախս ելեալ ի Բիւրակեան լե-
րանց, անցեալ ընդ սահմանս Տարօնոյ՝
գայ հասանէ ի Բասիան՝ զոր և յերկուս
բաժանէ, անցանէ ընդ Չօպան-քեօփրիւ-
սի կամրջաւ, ի ձախմէ թողու զՍողան-
լու (7), և այլ ևս իջեալ յաջմէ ձգէ զՎաղ-
զուան, զառաջեաւ Վեօռ-օղլու լերին
աջակցեալ ընդ Ախուրեան գետոյ՝ յելս
արևու ուղղէն զընթացն, յաջմէ ունե-
լով զՎոզբ և զՄասիս 8), և ի ձախմէ

զՍարտարասաւատ, զՀինն Արմաւիր, զգաշ-
տըն Արարատեան, և զԱրտաշատ 9), և
զգաշտն Շարուր, ուր ընդունի և զայլ
Արփա չայի, և զՆախիջեան 10), և զՕր-
տուպատ 11), և զՎգուլիս, և ի ձախմէ
զՎարդատական աշխարհ զսահմանս Պար-
սից:

(7) Այսպէս անուանի այս լեռնաշխարհեալ՝
լի անտառովք մեծամեծ մայր ծառոց, վասն յա-
ճախ բուսանելոյ անդ տխաձե ինչ բուսոյ: Ար
կամ Խանձիկ բոյսն պարտ է լինել. որ յանտա-
որս յաճախ բուսանի: Արդէս տեսք այլուր՝ զիւ-
ղականք մանդաղաքաղ լեալ՝ ի սայլս բարձեալ
բերնն. է զոր չորացուցանեն, և է զորս թթու
կազմեն, և ունի իսկ զՏամ սխտորոյ:

այնչափ տարածութիւն առ ստորոտովք, և կայ
ընդ մէջ սահմանաց երկց Պետութեանց: Յարե-
ւելս և ի Հիւսիս հայեցիկ կողմն է ի ձեռին Ռու-
սաց. որ յարեմուտս հայի առ սահմանօք Բարու-
նից՝ մերձ ի Պայազետ քաղաք, յՕսմանեան բաժնի
է. իսկ հարաւարտակն առ Մակուաւի Պարսիկս է:

Վամ Սոխուկ, որ ունի զՏամ սօխոյ. զոր կո-
տորեալ ի թարմ պանիրն խառնեն, և նովաւ ի
տկի ընուն, որ տայ զՏամ ինչ պանրոյն:

(9) Աս ի ծայր արևելեան կայ յԱրարատ դաշ-
տի. յորմէ և անցանէ ի Հարուր. Ի սմա ոչ մի
ինչ նշանակ աւերակաց հնոյն Արտաշատու տե-
սի: Միայն կայ վանքն ուր է Խոր-վիրապն՝ յոր
տընեցաւ չորեքտասանամեայ սուրբ Լուսաւորին
Գրիգորիօս, և ունի խորութիւն իբրև հնգետա-
սան կանգուն, Ի հարաւոյ սորա անցանէ Երասխ,
և ի զարնան տարածանի առաջի վանուզն եկեալ
հասեալ, Ի Հիւսիս ել յերևան աղահանք, զոր
գեռ չէ ի գործ եղեալ:

Վամ Խազաղ, զոր և ընդ հացի ուտեն հում,
Արդ թէ սորա և թէ այլ ինչ նմանաձե բոյս ի-
ցեն՝ որ անդ յաճախ բուսանին:

(10) Յայս դաւառ ևս կայ աղահանք, որ տա-
րածի ի Տաթև և ի Հուշի:

Այս լեռն բաժանէ զԲասեան ի Վարուց. ինձ
թուի թէ պարտ է երթալ հասանել առ Հիւս-
սիս մինչև ցԱրտաշան Զըրօրու:

(11) Եւ քանզի մասնաւոր սահմանքն Ռուս
սիոյ յաջմէ Երասխայ սկսեալ ի Քեօռ-օղլու լեռ-
նէ ցայս վայր դադարէ. ուստի յՕրտուպատ է
Զգուշարանն հաստատեալ վասն եկեղոցն ի Քաւ-
րիժոյ, ի Խոյայ, ի Սալմաստէ, ի Մարաղոյ, և ի
Մակուայ. որք ամենեքեան են մի մի քաղաքք
յԱրարատական աշխարհի, բաց ի բազմաթիւ
գիւղաքաղաքացն, և յորոց ընդ նոքօք են զիւզօ-
րայք. ուր կայ և ծովախն Արևայ անձուկն, բայց
աղաբեր:

(8) Պողբ՝ է մասնաւոր դաւառ. ընդ որ անցա-
նէ յերևանէ առ Գարունս: Զառաջեաւ սորա
կամուրջ կազմելոյ ստեպ բանք և զննութիւնք ե-
ղին, բայց դեռ չէ ի գործ եղեալ: Աղահանք նո-
րա յոյժ յոյժ առատորեր, որ ընու զՀայաստան
և զՎրաստան: Եռ Երասխաւ յաճախ են և ան-
դաստանք բամբակի: Յարձանազրութեանց յայտ-
նի լինի, թէ առ նախնեօք մերովք յաճախեալ էին
անդ և այգիք:

Իսկ Մասիս յարեկից հարաւոյ՝ կցորդեալ Պող-
բայ, ըստ համեմատութեան բարձրութեանն, զոր
համարին 19760 աշխարհազրական քայլ. չունի

Գաղթեալքն անտի յայս կոյս՝ պատմեն զտե-
ղըցն օղոյ քաղցրութիւն, և զզարմանալի բարե-
բերութիւն, մինչև որք յԱրարատեան դաշտի են՝
չին գօճ՝ ոչ ընդ օդ նորա, և ոչ ընդ բարեբերու-
թիւնն:

Ապա պատեալ զՏաթեաւ, անցեալ ի մօտոյ Մեղրի 12) զիւզաքաղաքի նորա: (Ի թիկանց Աստապատու և Ագուլխու և Երնջակ գաւառ, որ ունի զՍուրբ Կարապետի վանս հետի յԱրագէ:

Վանք՝ Եսխիջեանու, Կարմիր Վանք, որոյ պարիսպք և այգիք կցին յԱրագ, որոյ ի հանդէպ կայ ի Պարսից սահմանի՝ Եսխավկայի Ս. Ստեփաննոսի վանք:) Եւ զինի զաշխարհաւն Աղուանից 13) անջատեալ զԱրատաղ 14), ընդ միով երկուսասն

Գոգնն և զՕրտուպատ գաւառ. այլ օդ նորա ասնն վատթար, մինչև ի գաղթեցոցն ոչ որ վստահաց անդ բնականալ:

Երևի թէ և սա ընդ Ագուլխի, որում կից է, ի Գողթան գաւառի անկանի:

(12) Չայս անուն տուեալ ասնն սմա վանն յաճախութեան մեղեր՝ որ անդ լինի. և է աւան այգեւէտ, զորոյ գինին պատմեն իբրև զկարմիր զմուխդ ի վերայ եղնգան կալ. զոր և այլուր տարեալ վաճառեն:

(13) Յասկ մեր անդ Աղուանից աշխարհ՝ ի մանաւք զընդարձակ երկիրն Խարապաղու, որ ի սահմանակցութենէ Գեղարքունոց և Տաթեու որոշեալ, որ Չեկամ, Գետաշէն, Գանձակ, և Շուշի գաւառօք ստեալ՝ երկայնաձգի, և միջագետք իմն յերասիս և ի Վուր գետոց ձևացեալ, հասանէ ի տեղին Արազըլայ Գուր քաւուշան, որ գուցէ իցէ Մարանդաշատ տեղին, ուր ձմերոց է Մուղանաց. որոց միոյ միոյ ի նոցանէ հազարաւոր են կովք, զորս կթել իսկ շնն սովոր, այլ հետոցհետէ դաւերորդս վաճառեն, և բազմօք շահին: Սոքա յամառան առ սաստիկութեան տօթոյն ոչ բաւելով մնալ անդ, ելանն անասնովք իւրեանց ի բարձունս Հայաստանի և Արատանի. յայնժամ երկիւղալի է առանձնակ ուղևորութիւն, մինչև ի զիւզօրայս զանասունս գողանան, և թրուուցանեն ի Պարսկաստան և ի Տաճկաստան:

(14) Այս գաւառ աղարեր, որ յաջմէ Երասխայ անկանի, գուցէ իցէ յԱրտպատական աշխար-

կամարովք զարմանաշէն և անքակտելի կամրջովք, որ անուանի Խիւտա - փիլի 15)՝ անցաննն:

Եւ այսպէս ընթացեալ, ուրեք լայնանան մինչև եղեգնուտ շամբս գազանարքնակս կազմեն. ուրեք անձկանան՝ ասնն, այնչափ, մինչև մարդոց ընդոստնուլ ի միոյ ի միւս կողմն:

Յետ այսր պարտ է լինել Վարապազըն 16), յոր ճանապարհորդող ոչ զոք տե-

հի ի վերջնումս առին Ռուք ի Պարսից, որով և աստանօր անդր քան զԵրասիս կալաւ սահման. Աստ գաղթեցան ի փոխադրեցոցն ի Պարսկաստանէ այնքիկ ի Հայոց, որք յանձնապատան էին ի զօրութիւն բազկի իւրեանց, և պաշտպանել զստացուածս իւրեանց ի գողոց:

(15) Չարմանալի իմն պատմեն վասն ամրութեան կամրջոցս Չի զառաջինն յորում տիրեցին Ռուք Աղուանից, Խարատաղ կայր ի ձեռս Պարսից, յայնժամ առ զառաջս առնուլ երթևեկութեան նոցա, կամ առ սանձակոծելոյ զարշաւանս ընթացից նորա ի ժամանակի պատերազմաց, աշխատեալ են բազմօք և անհարին ուժգնութեամբ զայս պարիսպ քանդել. Յետ ուրեմն զմի կամար նորա և եթ են բաւեցեալ կործանել, զոր այժմ փայտակերտ արարեալ երթևեկեն:

(16) Այս բառ ակն յայտնի բարդութեամբն Հայեցի է. այլ զարմանք զի և առ Արարացիս նոյն անուն է՝ Վարապազ. Ի ճանապարհորդաց զայնու կողմամբք ոչ զոք տեսի, թէ առ որովք սահմանօք, կամ որչափ բարձրութեամբ, և թէ որքան բացատ զտնն իւր արկանէ, մի մի բաւէի ստուգել:

Բայց այս Քարապազ որ արդեւու զի վեր ընթացս ձկանց Կասպիական ծովուն, և Վուր գետոյն մանաւոր Շահմայի անուանեալ ձկան, որ ի Վուր, առ Յալեան կղզեաւ, նաև ի հինգ աւուր ճանապարհս յոյժ յոյժ յաճախութեամբ ելանէ, զոր աղեալ և ի ծուխ կախեալ առաքին յամենայն

սի, զի քաջ ստուգէի. երթան հասանեն ի ծայր Ազուանից աշխարհին, զոր պիտի անուանեն Արազըլայ-Պուր-քալուշան:

Ենդ ընդ Պուր զետ միացալ՝ զերկուց աւուրց ճանապարհ այլ ևս արարեալ՝ ընդ Մուղանս 17), մտանեն ի Ասսպիականն ծով 18):

Զուր Ախուրեան զետոյ նուազ է քան զԱրասխայն. այլ թափով էջք վազոյիցնորա ընդ երկար հատանէ զընթացս միւսոյն:

Երկոցուն զետոցս ջուր մի քան զմի քաղցր. այլ Արասխայն՝ Ազինական, և զեղ անմահութեան. զոր արժան է ըմպել ի վեր քան զՎասեան. զի անդ զհանքային ջերմկաց յինքն ընկալեալ զջուրս, և զկնի զաղայինս Աազուանու, չբաւէ այլ ևս ունել զնոյն սքանչելիսամ քաղցրութիւն:

երկիր. և է իւզովն և համովն համեմատ Ենեզու ձկան:

(17) Այս Մուղանք են որք ի սահմանի Պարսից են. են որ յայս ծայր Ազուանից, և են որ ի սահմանս Ռուսաստանեայց անդր քան զՎժտարխան տարածեալ:

(18) Յետ միանալոյ երկուց գետոցս, յաջմէ ձրգեն զսահմանս Պարսից, և ի ծայր անդր հասեալ ի վերայ գետոյն և ծովուն կայ Կիլան քաղաք: Ասեն թէ Պարսիկք միայն նաւարկեն յայս գետ, ունելով ի վերոյ և զայլ քաղաքս:

Իսկ ի ձախմէ են սահմանք Ռուսաց, ըստ Կիլանայ և Լենքերէ քաղաք առ ծովաւ և առ գետեզերքն կայ. որ և ի ծովուն ունի բերդ ամուր, և Պագու քաղաք, երկոքին իսկ նաւահանդիստու Ընդ մէջ Լենքերէի և Պագուայ առ լեռամբ կայ և առտո նաւթարեր տեղին, ուր Հնդկացի կրակապաշտք գան, և ունին սենեկաւոր ինչ վանս, և ի սենեկի փոխանակ ճրագաց զնաւթ լուցանեն ի զիշերի:

Յերկուսին զետս առանձին առանձին ձկունք ելանեն զանազան. Արասխայն հազիւ ընթանայ յԱխուրեան: Առաջի Հոռոմոսի վանաց վեց կշոյ ծանրութեամբ ձուկն ել, զոր գնեցի, այլ Արասխ առաւել ևս, մանաւանդ Աարմրախայտն մեծամեծ և աղնիւ:

Արասխ ինքնուրոյն ոչ սառի. Ախուրեան ի հանդարտ տեղիս սառի քաջ: Երկոքին յԱրարատ սառին այնպէս, մինչև ազատաքայլ ի վերայ ընթանալ և ծանրաբեռն սայլից:

Ասեն թէ ի ջուրց Արասխայ խղճմտոս այլազգիք անարժան և մեղս իսկ համարին յօրինական լուացումն լուանալ առ մարմնոյ արդարութեամբ յաղօթս կայոյ: Պատճառեալ թէ սա ներհակ այլոց գետոց ունի զարշաւանս իւր դէմ ելից արևու ուղղեալ, և հակառակեալ ընթացից արեգական:

Այսպիսիքս և ի փայտից թթենուոյ եփել զզոհ իւրեանց խղճեն, փոխանակ զի այս ծառ ընդ ձեղքուածս բնոյն հոսէ ջուր, և զայն՝ նմին տեռատեսութեան ախտ համարին. չգիտեմ որոց զխեժն ծորեցուցանեն՝ այնմ զի՞նչ սասն:

(Շարունակել)

